*Հավելված 9*
*ԱՊՔ ՊՀԾՁԲ-01/01 ծածկագրով*
*պարզեցված ընթացակարգի հրավերի*

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԱՊՔ ՊՀԾՁԲ-01/01
(մասնակցության հայտի ապահովում)

Ք. Ալավերդի <<16>> Փետրվարի 2017թ.

<<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության գլխավոր տնօրեն՝ Վահագն Էդվարդի Կակոսյանի (անձնագիր AP 0475084, տրված 07.07.2016թ.-ին 010-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է «Ալավերդու պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ անվտանգության ծառայությունների ձեռքբերման ԱՊՔ ՊՀԾՁԲ-01/01 ծածկագրով պարզեցված գնման ընթացակարգին:

1.2 Որպես մասնակցության հայտի ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ "Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների":

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները («Գնումների մասին» ՀՀ օրենքի 29 հոդվածի 2-րդ մաս) չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և Ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Բանկի կողմից մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է "ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ" ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև գնման ընթացակարգի շրջանակում կնքվելիք պայմանագրի ուժի մեջ մտնելը կամ գնման ընթացակարգում հաղթող չճանաչվելը կամ գնման ընթացակարգը չկայացված հայտարարելը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

"ԱՐ-ՄՈԲԻԼ" "AR-MOBIL" "АР-МОБИЛ" 01529671

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը՝ «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ

Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Արաբկիր 49 փող., թիվ 1

Սպասարկող բանկի անվանումը՝ « Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան » ՓԲԸ

Հ/Հ՝ 002-034320-002

ՀՎՀՀ՝ 01529671

Գլխավոր տնօրեն՝ ______________ Վահագն Կակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

Ֆին. տնօրեն՝ ______________ Արթուր Բարսեղյան
(ստորագրություն)
Կ.Տ